



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում (վերլուծություն)

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 126106 գործարք, որոնց քանակը, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 3.3 %-ով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 34208 օտարման գործարքների 71.7 %-ը կազմել է առուվաճառքը, 27.6 %-ը՝ նվիրատվությունը և 0.7 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման

գործարքների 37.0 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 35.1 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 3.4 %-ով: 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 9070 առուվաճառքի գործարքների 64.8 %-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 0.8 %-ով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ² մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	9 ամիս 2015թ.	9 ամիս 2016թ.
Կենտրոն	428000	428100
Արաբկիր	356600	357100
Քանաքեռ-Զեյթուն	282700	283100
Նոր-Նորք	253150	254100
Ավան	260600	261600
Էրեբունի	251900	252300
Շենգավիթ	257100	257600
Դավթաշեն	275800	276700
Աջափնյակ	250000	250900
Մալաթիա-Սեբաստիա	243200	244000
Նուբարաշեն	156700	157300
Միջինը Երևանում	274200	274800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.2 %-ով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 2733 բնակարան, որոնց քանակը 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4.1 %-ով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		9 ամիս 2015թ.	9 ամիս 2016թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116000
	Ապարան	57700	58400
	Թալին	66000	66700
Արարատ	Արտաշատ	97800	98800
	Մասիս	115800	115800
	Վեդի	101200	101700
	Արարատ	76300	77400
Արմավիր	Վաղարշապատ	154100	154200
	Արմավիր	121200	121200
	Մեծամոր	87500	87600
Գեղարքունիք	Սևան	99300	99400
	Գավառ	60100	60500
	Մարտունի	107700	107700
	Վարդենիս	44800	45200
	Ճամբարակ	28700	28800
Լոռի	Վանաձոր	88500	88600
	Ստեփանավան	74600	74700
	Սպիտակ	99800	99850
	Ալավերդի	55200	55700
	Տաշիր	47300	47400
	Թումանյան	11000	11000
	Շամլուղ	8000	8000
	Ախթալա	20400	20500
Կոտայք	Աբովյան	155100	155100
	Նոր Հաճն	128550	128550
	Բյուրեղավան	108200	108200
	Եղվարդ	109400	109800
	Հրազդան	63800	63900
	Ծաղկաձոր	292400	292400
	Չարենցավան	85500	85500
Շիրակ	Գյումրի	109200	109400
	Արթիկ	66800	67200
	Մարալիկ	40800	41000
Սյունիք	Գորիս	122900	123700
	Կապան	93800	95000
	Սիսիան	91900	92200
	Մեղրի	81800	83000
	Ագարակ	47200	47700
	Քաջարան	94600	94850
	Դաստակերտ	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95100
	Եղեգնաձոր	125600	126200
	Ջերմուկ	112900	113200
Տավուշ	Դիլիջան	114000	115500
	Իջևան	118300	118500
	Բերդ	60200	60400
	Նոյեմբերյան	50000	50350
	Այրում	31850	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.3 %-ով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 3024 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 891, մարզերում՝ 2133: 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 2.6 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 1.2 %-ով, իսկ մարզերում՝ 3.2 %-ով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	9 ամիս 2015թ.	9 ամիս 2016թ.
Կենտրոն	476100	476200
Արաբկիր	383000	383100
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200
Ավան	270500	270500
Էրեբունի	239750	239750
Շենգավիթ	255000	255000
Դավթաշեն	276000	276000
Աջափնյակ	250050	250100
Մալաթիա-Սեբաստիա	238000	238100
Նուբարաշեն	150800	150800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	286700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ մնացել են անփոփոխ:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		9 ամիս 2015թ.	9 ամիս 2016թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200
	Ապարան	60050	60050
	Թալին	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000
	Մասիս	115100	115100
	Վեդի	102300	102300
	Արարատ	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100
	Արմավիր	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94950
	Գավառ	57100	57100
	Մարտունի	96100	96100
	Վարդենիս	41000	41100
	Ճամբարակ	31100	31100
	Վանաձոր	100200	100900
Լոռի	Ստեփանավան	90400	91200
	Սպիտակ	114000	114000
	Ալավերդի	50200	50200
	Տաշիր	51900	51900
	Թումանյան	12000	12000
	Շամլուղ	14000	14000
	Ախթալա	30000	30000
	Աբովյան	157100	157300
Կոտայք	Նոր Հաճն	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500
	Եղվարդ	116100	116100
	Հրազդան	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000
	Զարենցավան	83000	83000
	Գյումրի	118700	119300
Շիրակ	Արթիկ	63100	63400
	Մարալիկ	52000	52000
	Գորիս	130000	130000
Սյունիք	Կապան	100200	100700
	Սիսիան	96500	96500
	Մեղրի	84500	84600
	Ագարակ	46900	46900
	Դաստակերտ	11610	11600
	Վայք	90100	90150
Վայոց ձոր	Եղեգնաձոր	116600	116750
	Զերմուկ	131300	131300
	Դիլիջան	113900	115600
Տավուշ	Իջևան	123200	123200
	Բերդ	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300
	Այրում	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2016 թվականի հունվար-

սեպտեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 0.1 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել է 12260 միավոր (5790.19 հա) հող, որից Երևանում՝ 781 միավոր (84.32 հա): Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 7235 միավոր (5302.52 հա), որից Երևանում՝ 44 միավոր (11.80 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 3442 միավոր (287.28 հա), որից Երևանում՝ 384 միավոր (22.10 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 1137 միավոր (126.73 հա), որից Երևանում՝ 324 միավոր (47.28 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 129 միավոր (51.07 հա), որից Երևանում՝ 27 միավոր (1.75 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 50 միավոր (14.75 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 253 միավոր (7.53 հա), որից Երևանում՝ 2 միավոր (1.39 հա),
- ջրային հող՝ 14 միավոր (0.31 հա) ընդհանուր մակերեսով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 9814 միավորի (4699.03 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 577 միավոր (61.31 հա), նվիրատվության գործարք՝ 2331 միավոր (1071.76 հա), որից Երևանում՝ 140 միավոր (14.80 հա) և փոխանակության գործարք՝ 115 միավոր (19.40 հա), որից Երևանում՝ 64 միավոր (8.21 հա):

Հանրապետությունում 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2015թ. նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 12.0 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 15.3 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 2.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 4.8 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Կոտայքի մարզում՝ 780.01 հա, որից 711.03 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.7 %-ը կամ 2524 միավորը (1038.11 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 189 միավոր (8.66 հա), իսկ 73.6 %-ը կամ 7223 միավորը (3658.91 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 381 միավոր (52.47 հա): 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 67 գործարք (2.01 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	0	0.00	9	0.92	73	3.46	107	4.28	32	9.03	17	0.82	208	12.26	123	28.97
Արագածոտն	180	135.58	9	0.61	28	0.88	71	3.11	476	397.82	2	0.01	173	17.48	8	0.68
Արարատ	149	216.51	5	1.07	109	6.26	38	1.71	623	433.55	2	0.22	315	27.11	30	0.96
Արմավիր	47	47.21	5	0.60	9	0.16	19	0.31	593	634.12	5	0.37	359	34.77	21	0.71
Գեղարքունիք	39	84.85	12	10.65	29	2.69	111	14.17	309	181.44	7	0.59	195	22.33	12	1.86
Լոռի	18	8.24	7	0.27	41	0.95	50	5.78	1168	570.65	3	0.04	75	6.81	26	1.17
Կոտայք	146	191.96	5	5.85	278	8.92	71	3.11	730	519.07	5	1.73	430	35.01	57	10.41
Շիրակ	131	39.13	4	3.55	41	2.68	55	3.06	327	258.36	4	0.33	68	6.99	20	1.21
Սյունիք	69	75.85	10	0.94	42	1.30	19	1.66	329	233.68	0	0.00	82	6.91	19	0.84
Վայոց ձոր	60	82.92	0	0.00	8	0.17	13	0.23	172	138.72	0	0.00	33	3.57	10	0.22
Տավուշ	31	52.16	4	0.49	57	4.10	47	1.19	72	42.86	3	0.08	51	4.31	8	0.60
Ընդամենը	870	934.41	70	24.95	715	31.57	601	38.61	4831	3419.30	48	4.19	1989	177.55	334	47.63

Ստորև ներկայացվում է 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Միավոր	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	107	3.34	8	0.91	54	1.35	45	1.08	82	5.31	0	0.00	1	0.01	19	2.10	62	3.20
Արագածոտն	38	1.86	0	0.00	3	0.22	35	1.64	150	102.97	80	100.23	9	0.61	25	0.66	36	1.47
Արարատ	13	0.26	0	0.00	7	0.21	6	0.05	284	215.24	145	206.46	5	1.07	102	6.05	32	1.66
Արմավիր	11	0.26	0	0.00	5	0.06	6	0.20	68	47.55	46	46.74	5	0.60	4	0.10	13	0.11
Գեղարքունիք	32	10.57	3	9.68	8	0.43	21	0.46	159	101.78	39	84.85	9	0.97	21	2.25	90	13.71
Լոռի	30	0.22	0	0.00	17	0.13	13	0.09	86	15.01	18	8.24	7	0.27	24	0.81	37	5.69
Կոտայք	163	0.94	0	0.00	159	0.75	4	0.19	336	208.82	145	191.88	5	5.85	119	8.17	67	2.92
Շիրակ	64	5.36	2	0.38	19	2.09	43	2.89	42	12.12	6	8.18	2	3.17	22	0.60	12	0.17
Սյունիք	26	0.54	1	0.03	20	0.10	5	0.41	113	79.17	68	75.83	9	0.90	22	1.20	14	1.24
Վայոց ձոր	7	0.11	0	0.00	1	0.03	6	0.08	74	83.21	60	82.92	0	0.00	7	0.14	7	0.15
Տավուշ	17	0.56	0	0.00	12	0.47	5	0.09	120	56.69	29	51.47	4	0.49	45	3.63	42	1.10
Ընդամենը	508	24.02	14	11.00	305	5.84	189	7.18	1514	927.87	636	856.80	56	13.94	410	25.71	412	31.42

Հանրապետությունում 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 234 գործարք (77.62 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 0.4 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 5.7 %-ով, իսկ

մարզերում՝ 0.1 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 20.2 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 17.7 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 6.6 %-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ՝ 9.7 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	56	74.53	40.3	4498.3	469.7	266	202.97	365.0	12000.0	3457.1
Ապարան	4	1.66	70.1	3743.3	1006.0	19	9.83	86.5	2727.3	632.4
Թալին	17	23.65	37.9	450.0	177.4	139	88.57	93.6	5494.5	756.4
Ծաղկահովիտ	3	0.38	517.8	3410.5	1965.3	47	95.62	79.5	1000.0	386.4
Արարատի մարզ										
Արտաշատ	75	34.09	68.4	36316.8	1821.4	279	105.29	335.1	10833.3	2699.9
Մասիս	18	56.34	59.5	1866.4	496.6	134	79.19	200.0	11904.8	3260.6
Վեդի	52	116.04	45.0	996.4	258.8	188	241.22	207.0	10795.1	1970.0
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	4.23	63.0	1058.4	397.5	270	181.25	294.3	9090.0	1347.5
Բաղրամյան	13	11.82	70.9	1478.9	163.4	95	316.19	90.6	2561.1	917.9
Վաղարշապատ	27	30.69	29.0	1682.5	267.1	208	126.78	444.4	11764.7	1959.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	10	18.98	163.5	663.8	454.2	215	63.96	199.8	1875.0	499.3
Ճամբարակ	1	7.00	168.7	168.7	168.7	7	1.98	60.5	953.3	351.6
Մարտունի	4	4.35	64.6	381.1	144.0	19	5.25	51.1	2850.0	782.2
Սևան	11	10.32	180.0	1221.0	631.6	16	6.74	52.2	2134.8	354.7
Վարդենիս	13	44.20	115.4	885.6	363.0	52	103.51	41.2	2575.1	399.5
Լոռու մարզ										
Ալավերդի	9	1.53	670.7	2561.8	1943.3	45	24.59	170.4	6424.2	569.9
Գուգարք	5	3.06	170.0	1456.2	633.7	23	11.57	234.6	6065.9	813.7
Սպիտակ						13	3.71	250.0	5555.5	675.0
Ստեփանավան	1	1.02	123.9	123.9	123.9	50	38.90	90.6	1686.6	415.9
Տաշիր	3	2.63	168.1	536.5	260.6	1025	469.78	45.3	1384.4	185.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	78	106.46	69.5	2760.3	441.9	182	144.77	279.3	11942.7	3962.2
Եղվարդ	51	71.53	44.6	5712.6	460.8	439	317.07	174.4	11971.8	2528.0
Հրազդան	16	13.88	85.4	897.3	295.3	89	49.79	130.5	10256.4	1003.0
Շիրակի մարզ										
Ախուրյան	3	5.84	103.5	514.7	316.8	101	86.53	252.0	1693.1	651.8
Ամասիա	1	1.08	295.3	295.3	295.3	10	19.45	40.9	261.0	137.1
Անի	1	1.15	93.0	93.0	93.0	118	86.80	110.6	546.9	454.6
Աշոցք						5	2.14	58.5	215.8	138.5
Արթիկ	1	0.11	828.0	828.0	828.0	89	62.30	79.4	1428.6	517.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	0.43	162.8	162.8	162.8	28	38.10	92.6	1023.2	781.5
Կապան	15	12.95	77.0	931.9	301.5	130	73.80	120.0	841.6	438.2
Մեղրի	48	60.93	37.1	1246.3	304.9	77	26.44	193.0	3000.0	800.4
Սիսիան	4	1.52	133.9	1550.0	608.0	93	95.21	46.3	1977.4	588.1
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	29	49.50	21.7	1156.4	245.5	94	68.29	125.0	10000.0	1751.3
Վայք	31	33.43	16.7	704.0	193.7	78	70.43	58.8	1430.7	595.2

Տավուշի մարզ										
Բերր						33	11.38	213.3	3783.8	687.2
Իջևան	18	49.87	154.7	3240.0	1356.4	27	23.97	267.5	9454.5	1517.9
Նոյեմբերյան	11	1.60	150.5	5806.9	2434.3	12	7.51	46.7	7368.4	983.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ ²)	պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ ²)	շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	19	3776.1	421.7	5714.3	3597.9	129	114355.5	130.7	22200.0	2591.1
Ապարան	4	1312.2	122.1	553.0	358.0	19	19587.0	124.1	609.6	389.8
Թալին	2	1537.0	77.4	292.5	185.0	20	27727.3	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						5	13129.0	60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ	31	25141.8	399.0	6068.5	904.4	85	88490.5	173.9	7140.3	905.5
Մասիս	38	18408.1	535.3	4011.4	2657.5	166	115211.7	187.5	25000.0	1207.9
Վեդի	33	16966.0	667.2	3000.0	933.1	59	62437.3	126.1	5000.0	664.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	840.4	555.0	3528.0	2784.7	124	123927.1	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան						11	14636.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	1	195.0	554.9	554.9	554.9	214	197075.6	197.4	26528.4	1530.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	3	6679.0	192.5	850.5	521.5	22	22742.6	186.6	1084.3	683.7
Ճամբարակ						7	4679.0	71.3	2286.2	146.8
Մարտունի	9	7274.0	112.6	404.9	241.2	138	149980.8	119.3	5000.0	280.7
Սևան	5	2400.6	410.5	1805.7	1091.9	10	11034.9	240.0	3110.4	340.4
Վարդենիս	4	6179.3	38.5	1200.0	609.6	18	34876.6	72.5	987.2	150.7
Լոռու մարզ										
Ալավերդի	8	2503.3	225.0	2750.1	1321.6	28	27591.0	114.3	1388.9	217.0
Գուգարք	12	2907.5	197.5	5843.3	2226.0	22	15502.4	77.9	14083.3	1259.8
Սպիտակ	1	605.1	736.2	736.2	736.2	9	10150.0	104.9	1348.3	200.1
Ստեփանավան	1	1177.6	173.2	173.2	173.2	13	11894.9	88.2	1666.7	175.6
Տաշիր	2	942.7	316.5	400.0	358.3	2	2000.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Արովյան	81	48921.3	352.9	5650.0	3387.8	204	152137.6	264.5	35353.5	1952.8
Եղվարդ	32	30580.5	204.2	4976.4	1773.8	185	157373.5	173.6	27000.0	2856.6
Հրազդան	6	2219.0	278.3	3904.8	1966.7	35	34851.0	117.7	34848.5	1318.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	13	3444.7	244.9	10500.0	4851.6	21	20021.5	113.6	18750.0	333.9
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	2	431.5	464.9	1797.8	1131.4	21	30711.0	67.9	180.6	208.4
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	7	2092.0	580.8	2875.2	1974.3	24	19028.3	111.8	5000.0	217.9
Սյունիքի մարզ										
Գորիս	4	1939.0	230.0	230.0	230.0	13	11694.0	112.2	1700.0	366.9
Կապան	8	2348.0	266.4	2600.0	1652.0	9	8808.5	67.9	2638.9	356.4
Մեղրի	7	5713.1	100.8	607.4	305.8	20	16610.4	68.5	632.9	269.8
Սիսիան	3	2000.0	554.4	580.8	572.0	40	32027.0	123.5	875.0	251.8

Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	1228.3	354.5	1655.9	881.7	29	33860.0	96.7	7659.6	506.9
Վայք	4	174.3	1050.0	1068.7	1054.7	4	1796.0	120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						2	1165.0	75.8	810.0	126.0
Իջևան	17	9465.5	165.8	3000.0	1676.6	44	37329.1	74.1	14423.1	512.9
Նոյեմբերյան	28	26863.7	110.0	1100.4	568.5	4	3624.2	125.0	1948.1	252.3

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5639 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.5 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 74.1 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից: 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքի քանակն աճել է 9.0 %-ով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 351 բնակարանի, 448 անհատական բնակելի տան, 2619 հասարակական, 588 արտադրական նշանակության օբյեկտի, 1523 միավոր հողի, 107 ավտոտնակի և 3 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 52 վարձակալության գործարքի քանակը 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 5.5 %-ով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 5505.84 հա հողերից 9.73 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 5496.11 հա հողերից 5240.58 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 139.67 հա արդյունաբերական օբյեկտների, 3.12 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 1855.29 հա, որից 1844.11 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 14280 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.3 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 19.4 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (52.1 %), առանձնատների (22.0 %). հասարակական նշանակության օբյեկտների (11.5 %) և հողերի (8.9 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7873 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2015 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատ աճել է 16.3 %-ով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել է 8815.69 հա մակերեսով հող, որից 41.68 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 4398.04 հա կամ 49.9 %-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 2.04 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 3195.22 հա, որից 3190.16 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 1243 գործարք, որից 839-ը՝ Երևանում: 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման

գործարքների քանակը աճել է 22.6 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 16.7 %-ով, իսկ մարզերում՝ 36.9 %-ով:

2016 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 15366 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 0.9 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 12.2 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում(22.2 %):

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե